

տերը վաստըկիլ թէ եկեղեցականներէն, եւ թէ իշխաններէն ու ժողովրդէն, որոնց ոմանց անուններն ստորեւ մեր հրատարակած նամակներէն պիտի իմանանք: Շատ խօսեցաւ վարդապետաց եւ իշխանաց հետ, որ իրենց եկեղեցւոյ կաթողիկեայ հաւատքէն տարբերութիւնը միայն Յունաց եւ Ատրուոց ձեռք յառաջ եկած է, եւ թէ պէտք է թօթափել իրենց հին հաւատքին այս յաւելուածները: Սակայն այլեւայլ նկատումներ թոյլ չէին տար ամենուն այս քայլն առնլու: Ինքն ալ արդէն եօթանասունն անցած եւ հիւանդագին՝ ուղեց իբրեւ ուղղափառ ուղղափառաց մէջ կեանքին մնացորդն անցընել եւ անոնց մէջ մեռնիլ: Ունէր նա եւ մեծ ծրագիր մը՝ ազգին օգտին համար, զոր կը յուսար գործադրել տալ ի Հոռոմ, ինչպէս վարն իր գրութիւններէն պիտի տեսնենք:

Մենք թող տանք զինքն առ այժմ ի Մարտիլիա, եւ տեսնենք, թէ ինչեր անցան Վ.Պողոս իր մեկնումէն ետեւ, եւ իր հետեւողներէն ի մասնաւորի երկու նշանաւոր անձնաւորութիւնները նկատողութեան առնունք, այն է՝ Գրիգոր Պատրիարք Պասմաձեան, եւ Յարութիւն Աբեպ. Բասենցի: Երրորդին՝ Պրոսպի Առաջնորդ Սամուէլ Եպ. Երզնկացւոյն վրայ՝ վերն արդէն խօսեցայ: Այստեղ կը յաւելում նաեւ հետեւեալները, որով վերը տարակուսական թողածներս կը լուսաւորուին: Վերն յիշուած Սարգիս Վ. Թէքիրտաղցւոյ